


# Սովորողների հարմոնիկ լսողության ձևավորումը և զարգացումը

Հայրապետյան Արմինե Ս.

հայցորդ, դասախոս, Երաժշտության մանկավարժության անբիոն, Գեղարվեստական կրթության ֆակուլտետ, Երևանի Խոսչատուր Աբրահամյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0004-0441-4427>  
[arminehayrapetyan8888@gmail.com](mailto:arminehayrapetyan8888@gmail.com)

ՀՏԳ՝ 78.06; EDN: WEVLFX

DOI: 10.58587/18292437-2025.3-175

**Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝** հարմոնիկ լսողություն, բազմաձայնություն, երաժշտություն, իմպրովիզացիա, ներքին լսողություն, մելոդիկ լսողություն, ընդունակություն, երաժշտալսողական պատկերացումներ, արվեստի դպրոց, հմտություն, լադ

## Формирование и развитие гармонического слушания у учащихся

Айрапетян Армине С.

соискатель, преподаватель кафедры музыкальной педагогики, факультет художественного образования,

Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна (Ереван, РА)

**Аннотация.** В статье говорится о формировании, развитии и применении у учащихся навыков гармонического слуха, которые занимают важное место среди существующих музыкальных способностей. Далее приводится ряд способностей, характеризующих гармоническое слушание, и в конце приводятся примеры, подтверждающие, что развитие навыков гармонического слушания ведёт к развитию творческих способностей.

**Ключевые слова и фразы:** Гармоническая изобретательность, полифония, музыка, импровизация, внутренняя соленость, мелодичный восторг, способности, музыкальное понимание, художественная школа, навык, лад

## Development and Formation of Students Harmonic Hearing

Hayrapetyan Armine S.

Applicant, lecturer at the Department of Music Pedagogy, Faculty of Fine Art Education, Armenian State Pedagogical University named after Khachatur Abovyan (Yerevan, RA)

**Abstract.** The article discusses the formation, development, and practical application of students harmonic hearing, which holds a significant place among existing musical abilities. It outlines a number of capacities that characterize harmonic hearing and concludes with examples demonstrating that the development of harmonic hearing contributes to the enhancement of creative skills.

**Keywords and phrases:** Harmonic hearing, polyphony, music, improvisation, inner hearing, melodic hearing, nability, musical-auditory perceptions, art school, skill, mode

### Ներածություն

Անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման համար պետք է լինեն նախադրյալներ, որոնք այս կամ այն ձևով կնպաստեն այդ զարգացման հաջող ընթացքին: Իսկ նախադրյալներից կարևորը, եթե ոչ ամենակարևորը, ընդունակության բացահայտումը, դրսևորումն ու զարգացմանը նպաստելն է:

Երժշտական ընդունակությանը խթանելը պահանջում է գործընթացների շարունակական շղթա, որում առաջնայինը ճիշտ հիմքերի վրա իրականացվող բարեխիղճ աշխատանքն է մանկավարժի կողմից, որը և զարգացնող նախադրյալների պայմաններ է ստեղծում, ինչը բոլոր ժամանակների համար իրականացվող և անընդհատ

արդիականացվող պարտադիր երևույթ է: Այստեղ մեծ տեղ է զբաղեցնում երաժշտական օժտվածությունը, որը բնորոշվում է որպես ընդունակությունների որակապես յուրօրինակ զուգակցում [7, էջ 42]:

Մինչ օրս, արակտիկ գործունեության մեջ գոյություն ունեցող, տեսական դրույթներով հիմնավորված, սովորողների մելոդիկ և հարմոնիկ լսողության ձևավորումը և զարգացումը, մնում է մշակվող և զարգացում պահանջող խնդիր:

Մինչ երաժշտական լսողության իրականացումը՝ վերջինս որպես ընդունակություն գիտակցելն է, իսկ այնուհետև՝ նաև զարգացնելը, քանի որ ընդունակությունը գոյություն ունի միայն շարժման, զարգացման մեջ: Հետևաբար, խնդիր

է առաջանում երաժշտական, իսկ մասնավորապես՝ հարմոնիկ լսողության զարգացման ուղիներ գտնելու համար:

### **Ուսումնասիրություններ**

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կարելի է ձևավորել մի քանի՝ սկզբունքորեն կարևոր դրույթներ, որոնք ընկած են երաժշտական լսողության զարգացման մեթոդիկայի հիմքում: Այդ դրույթները հետևյալներն են.

- ավելի հաջող լսողությունը զարգանում է երաժշտության էմոցիոնալ և գիտակցական ընկալման և վերարտադրման հիման վրա,

- երաժշտական լսողությունը զարգանում է բոլոր մյուս երաժշտական ընդունակությունների հետ փոխներգործակցված:

Երաժշտական լսողությունը ձևավորվում է երաժշտական գործունեության գործընթացում՝ կապված հնչյունների բարձրության վերարտադրման հետ [6, էջ 22];

Փորձը ցույց է տալիս, որ հարմոնիկ լսողության ձևավորման աշխատանքները պետք է սկսել վաղ տարիքից, քանզի երաժշտական առաջին տպավորությունները վառ են և կայուն:

Ամենակարևոր նպատակը՝ կուտակել երաժշտական տպավորություններ՝ հիմք ստեղծելով հարմոնիկ լսողության հետագա զարգացման համար:

Մանկավարժի կարևոր նպատակներից մեկը բազմաձայնության այս կամ այն զժերի նկատմամբ ուշադրության կենտրոնացման ձևավորումն է: Հարմոնիկ լսողության զարգացման կարևոր գործառույթներից են հանդիսանում բազմաձայնություն երգելը: Մեծ բարդություն է ներկայացնում՝ հնչած բազմաձայնության կատարումը, ներքին բազմաձայն պատկերացումների ամրապնդումը: Այդպիսին է խմբական երգեցողությունը, որի ընթացքում զարգանում են կարևոր երաժշտական ընդունակություններ՝ լսողություն, կշռույթի զգացողությունը, հիշողությունը, ձեռք են բերում ընկալման հմտություն [1, էջ 30];

Անհրաժեշտ է նշել, որ ինչպես հարմոնիկ, այնպես էլ մելոդիկ լսողության զարգացման աշխատանքներն անհրաժեշտ են ճիշտ ինտոնացիայի ձևավորման համար:

Երաժշտական և մանկավարժական գրականության մեջ, հարմոնիկ լսողության զարգացմանը միշտ էլ ուշադրություն է դարձվել, քանի որ յուրաքանչյուր երաժշտական գործունեություն, սերտորեն կապված է բազմաձայնության ընկալման և վերարտադրության հետ, որն առաջին հերթին իրականացվում է հարմոնիկ լսողության միջոցով:

Հարմոնիկ լսողությունը երաժշտական լսողության տարատեսակ է: Հոգեբանական և մանկավարժական գրականության մեջ, երաժշտական լսողությունը համարվում է երաժշտական

ունակության կարևորագույն բաղադրիչ, առանց որի հնարավոր չէ հաջողությամբ իրականացնել ցանկացած երաժշտական գործունեություն: Այն ապահովում է բազմաֆունկցիոնալ երաժշտության ընկալումը:

Հարմոնիկ լսողության զարգացման աշխատանքների մեծ մասը, հազվադեպ բացառություններով, վերաբերում է կամ պրոֆեսիոնալ երաժշտական կրթության ոլորտում կրտսեր և ավագ օղակներին, կամ արվեստի մանկական դպրոցների բարձր դասարանների աշակերտներին: Խնդիրը դիտվում է տարբեր տեսակետներից. հարմոնիկ լսողության զարգացումը վոկալ վարժությունների ընթացքում (Ա. Դ. Վարֆլոմս, Ս. Ե. Մակսիմով, Բ. Ա. Նեգնանով, Ի. Պ. Նիկիտինա, Կ. Կ. Պիզրով, Վ. Ի. Շիպ), երաժշտության ընկալման գործընթացում (Յու. Բ. Ալիև, Ա. Ն. Մյասնեդով), երաժշտական գործունեության բոլոր տեսակների համալիրով (Ի. Վ. Դավիդովա, Տ. Լ. Կալուժսկայա, Ա. Պ. Պոստրովսկի):

Հարմոնիկ լսողության բոլոր մեթոդիկաները հիմնվում են զարգացած մելոդիկ լսողության վրա՝ ենթադրելով երաժշտության տեսության բավականաչափ ընդարձակ գիտելիքներ, և նախատեսված են իրագործվելու սովորողների ավելի բարձր տարիքում:

Մինչդեռ, սկզբնական շրջանում սովորողների մեղեդային լսողության աստիճանական զարգացումը, այնուհետև հարմոնիկ լսողության զարգացումը, ժամանակակից երաժշտական պրակտիկայում համարվում է աննպատակամետ, քանի որ զգալիորեն դանդաղեցնում է բազմաձայն երաժշտության ներքին լսողական պատկերացումների ձևավորումը, ֆունկցիոնալ վերլուծության հմտությունները և բազմաձայնության վոկալ ինտոնավորումը (Ե. Վ. Դավիդովա, Վ. Վ. Կիրյուշին, Ա. Լ. Օստրովսկի): Օբյեկտիվորեն, կա անհրաժեշտություն զարգացնել հարմոնիկ լսողությունը՝ երաժշտություն ուսանելու ամենասկզբից՝ մելոդիկ լսողության հետ զուգահեռ, քանի որ երաժշտական դպրոցի առաջին դասարանում աշակերտները բազմաձայն երաժշտություն են կատարում երգչախմբի դասերին, երաժշտական նվագարանով, անսամբլում, ինչը պահանջում է կայուն երաժշտալսողական պատկերացումներ, բազմաձայն երաժշտական հյուսվածքի կառուցվածքը հասկանալու, երաժշտական կերտվածքում ձայների հարաբերակցությունը լսելու կարողության համապատասխան մակարդակ և այլն:

Հարմոնիկ լսողության բարդությունը պայմանավորված է ոչ միայն նրա կազմությամբ, այլ նաև մարդու լսողության ֆիզիոլոգիական առանձնահատկություններով: Գիտնականների կողմից ապացուցված է, որ երաժշտական լսողությունը ավելի ակտիվ զարգանում է երգեցողությամբ, այսինքն՝ ձայնային կապերի միջոցով,

բայց այնպես, ինչպես մենք կարող ենք երգել միաձայնությունը, հետևապես, այդպիսի երգեցողությունը քիչ կնպաստի հարմոնիկ լսողության զարգացմանը: Այդ պատճառով հիմնական շեշտը հարմոնիկ լսողության դեպքում դրվում է ներքին երաժշտալսողական պատկերացումների վրա: Լսողական պատկերացումներում ներքին վերարտադրման զարգացումը դառնում է բավական ուժեղ և ամուր. ստեղծվում են ամենաբազմաբնույթ միջզգայական գուգորդումներ [4, էջեր 28-29, 31]:

Այսպիսով, միաձայն կամ բազմաձայն երաժշտության անձանոթ նոտաների իրական հնչողության մտովի պատկերացումը կապված է ներքին լսողության հետ: Կարևոր և անհրաժեշտ պայմանը ներքին լսողության իրականացման համար հանդիսանում է ուշադրության հավասարակշռությունը [6, էջ 89]:

Ներքին լսողությունը կարելի է մշակել բոլոր սովորողների մոտ: Այնուամենայնիվ, նույնիսկ ուսուցչի մանրագնին աշխատանքի շնորհիվ, տարբեր աշակերտների մոտ կլինեն տարբեր արդյունքներ: Ներքին լսողության զարգացման աստիճանը այն հատկանիշներից մեկն է, որոնք բնութագրում են սովորողների երաժշտականությունը:

Ներքին լսողությունը կախված է՝

- սովորողի երաժշտական տպավորումներին հարստությունից, դրանց երաժշտական ընկալման և հիշողության որակից,
- լսողական կենտրոնների կարողությունից՝ հիշողության մեջ կուտակված պատկերացումների համադրման միջոցով,
- սովորողի երաժշտական մտածողության զարգացվածությունից:

Հարմոնիկ լսողության ձևավորման և, առավել ևս դրա զարգացման համար պետք է հաշվի առնել սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները, ինչպես նաև կարևորել երաժշտատեսական առականների սերտ փոխներգործությունությունը:

Հարմոնիկ լսողության ձևավորումը հարկ է դիտել որպես սովորողների երաժշտական հմտությանը ակտիվ հաղորդակից լինելու պայման, որպես զգայական հարստացման արդյունավետ միջոց: Այն իրենից ներկայացնում է բազմաթիվ հնչյունները միաժամանակ, որպես մեկ ամբողջություն ընկալելու ընդունակություն: Հարմոնիկ լսողությունը՝ «անցում է պարզ» զգացողությունից «բարդին», անցում՝ միասնությունից դեպի միասնության և բազմության միաժամանակյա ընկալման:

Հարմոնիկ զգացողությունների ամբողջական ընկալման համար անհրաժեշտ են տեսական գիտելիքներ, քանի որ դրանց շնորհիվ իմաստավորվում են լսողական տպավորությունները: Բացի այդ, առանց տեսական կողմնորոշման

լսողական տպավորությունները չեն կարող ամրապնդվել սովորողի գիտակցության մեջ և այդ պատճառով չեն նպաստի լսողական վերլուծության որոշակի ունակությունների մշակմանը: Մեծ դժվարություն է իրենից ներկայացնում բազմաձայնության ուղղությամբ տարվող աշխատանքը, բազմաձայն ներքին պատկերացումների ամրապնդումը:

Հարմոնիկ լսողության ձևավորումը պահանջում է անընդհատ և տարբեր իրավիճակներում հարմոնիկ մտածողության դրսևորում, ինչն էլ պայմանավորում է զարգացման ճիշտ ուղիներով բացահայտել այն: Դրա հետևողական և նպատակային զարգացումը անհրաժեշտ պայման է հանդիսանում բարելավելու երաժշտության սկզբնական փուլի ուսուցման արդյունավետությունը, քանի որ այն սպասեցվում է երաժշտության տեսակերպարային պատշաճ ընկալում, ստեղծագործական հմտությունների ինտենսիվ զարգացում, երաժշտական տեքստի գիտակցված վերլուծական մոտեցման ձևավորում:

*Հարմոնիկ լսողություն*

Հարմոնիկ համահնչյունները լսելու, հնչյունների ակորդային համակցությունները և դրանց հաջորդականությունները ձայնով կամ երաժշտական գործիքով վերարտադրելու ունակություն: Գործնականում դա կարող է արտահայտվել, օրինակ, նույնիսկ առանց նոտային տեքստի՝ երաժշտության նվագակցության և մեղեդու ընտրությամբ: Հարմոնիկ լսողության զարգացումը հնարավոր է, նույնիսկ այդ ունակության նախնական բացակայության պայմաններում: Լսողության տեսակների շարքում հարմոնիկ լսողության դերը և նշանակությունը պայմանավորում է սովորողների երաժշտական լսողության զարգացումն ընդհանրապես: Լսողության տվյալ տեսակը ընդհանուր հիմքեր ունի մեղեդիկ լսողության հետ. լսողի զգացողություն և երաժշտալսողական պատկերացումներ:

**Եզրակացություն**

Այսպիսով, պետք է նշել, որ հարմոնիկ լսողության ձևավորման և զարգացման հարցը կա և կմնա կարևորներից մեկը երաժշտարվեստում: Իհարկե, այս հարցին շատերն են անդրադարձել, բայց խնդիրը առկա է՝ մասնավորապես մեր երկրում, քանզի մեր երաժշտական մտածողությունը մոնոդիկ է, հետևաբար երեխաները դժվարանում են բազմաձայնությունը ընկալել և կատարել:

Ե՛վ երաժշտական դպրոցում, և՛ ուսումնական հաստատություններում սովորողների անհատական առանձնահատկությունները հաշվի առնելը խնդրի մանկավարժական կողմի դրսևորման նախադրյալներից է, ինչը հարմոնիկ լսողության համար հանդիսանում է զարգացման գործընթացի արդյունավետ միջոց:

Մանկավարժի խնդիրն է՝ երաժշտական գործունեության տեսակներից օգտվելով՝ պայմաններ ստեղծել սովորողների ակտիվ երաժշտական լսողության թե՛ ձևավորման և թե՛ զարգացման համար: Ձևավորման ու զարգացման գործընթացների անընդհատությունը ենթադրում է երաժշտական լսողության ընդունակության առկայությունից բխեցնել և կարևորել հարմոնիկ լսողությունը, որի ձևավորումը հնարավոր է երաժշտատեսական առարկաների շրջանակներում ընթացող նպատակաուղղված և հետևողական աշխատանքի կիրառմամբ:

Չարգացած հարմոնիկ լսողությունը ենթադրում է, որ մարդը, որը տիրապետում է բազմաձայն հնչողության տարբեր կողմերը որոշելու հմտությանը, համադրում է դրանք և կարող է լիովին գիտակցել ընկալվող երաժշտությունը, այսինքն, ի վիճակի է վերլուծել, նվագել և վերարտադրել այն:

Հարմոնիկ լսողության զարգացումը նպաստում է ստեղծագործական հմտությունների զարգացմանը, ինչը պակաս կարևոր չէ: Դասընթացն ավարտելուց հետո տեսական հասկացությունները մոռացվում են, բայց երգելու, նվագակցության և իմպրովիզացիայի հմտությունները (ստեղծագործությունները) մնում են մինչև կյանքի վերջ:

#### Օգտագործված գրականության ցանկ

1. **Մելիքսեթյան Գ. Բ.** Դպրոցականների բազմաձայն մտածողության ձևավորումը երաժշտության դասին: – Երևան, Հայաստան հրատ., 2007;
2. **Յուզբաշյան Յու. Վ., Վեյս Գ. Ֆ.**, Կրտսեր դպրոցականների երաժշտական մտածողության զարգացումը, մեթոդական ձեռնարկ; – Եր.: «Լույս» հրատ., 1982. – 222 էջ:
3. **Ագաջանով Ա. Ս.** Воспитание музыкального слуха. Сборник статей. – Москва: Музыка, 1977. – 81 с.
4. **Гейнрихс И. П.** Музыкальный слух и его развитие. – Москва: Музыка, 1978. – 80 с., нот.
5. **Давыдова Е. В.** Методика преподавания сольфеджио. – Москва: Музыка, 1975. – 160 с.
6. **Серединская В. А.** Развитие внутреннего слуха в классах сольфеджио. – М.: Музгиз, 1962. – 92 с.
7. **Теплов Б. М.** Психология музыкальных способностей. – М.-Л.: АПН РСФСР, 1947. – 355 с.
8. Виды музыкального слуха ~ <http://all-2music.com/>
9. Երաժշտական լսողություն // Էլ. կայք՝ Վիքիպեդիա Ազատ հանրագիտարան, [https://hy.wikipedia.org/wiki/Երաժշտական\\_լսողություն](https://hy.wikipedia.org/wiki/Երաժշտական_լսողություն) (Դիտման ժամկետ՝ 25.04.2025)

*Շտամ/Հանձնվել է՝ 29.04.2025*

*Рецензирована/Գրախոսվել է՝ 06.05.2025*

*Принята/Ընդունվել է՝ 13.05.2025*